

ՀԵՌՈՒ ՉԷ ՆԱԵՎ ԵՐՐՈՐԴ «ՈՍԿԻՆ»

Երագում էր սովորել ծիշտ անպես, ինչպես հորեղբայր Ռոբերտ Ջուհարյանը՝ «ոսկով» ավարտել դպրոցը, իսկ կարմիր դիպլոմով՝ բարձրագույնը: Դպրոցում լուրջ ուշադրություն էր դարձնում բոլոր առարկաներին: Իսկ ահա մասնակցությունը քաղաքային մաթեմատիկական օլիմպիադային վճռորոշ երավ պատանու համար. ապագան պիտի կապեր ճշգրիտ գիտությունների հետ, թեպետև հոգեհարազատ էին նաև հումանիտար առարկաները:

Եվ երբ 1975-ին ոսկե մեդալով ավարտեց դպրոցը, առանց վարանելու դիմեց համալսարանի ռադիոֆիզիկայի նորաստեղծ ֆակուլտետ:

Դարձավ ուսանող: Հորեղբոր նման հստակ կատարեց «առաջին քայլը»: Մնում էր երկրորդը: Նա քաջ գիտեր, որ առանց աշխատասիրության ոչնչի չի հասնի: Դասերից դուրս գրադարաններում անցկացրած ժամերը, իսկ տանը՝ անքուն գիշերները, զուր չանցան: Զեռքերեց խոր գիտելիքներ և «ստիպեց» պրոֆեսորադասախոսական կազմին իր հանդեպ ուշադիր լինել: Կիսամյակների ընկություններին նրա տված սպառիչ և համոզիչ պատասխանները ամեն անգամ մեծ

բավականություն էին պատճառում բասախոսներին և միշտ էլ գնահատվում գերազանց: Արդյունքը՝ կարմիր դիպլոմ: Եվ պատահական չէ, որ 1980-ին նորավարտ երիտասարդին միաձայն որոշմամբ թողեցին աշխատելու համալսարանում: Դեռ երեկ էր, որ ուսանող էր, իսկ այսօր արդեն պետք է դասավանդեր իր հասակակիցներին:

Ահա այսպես է սկսել իր աշխատանքային կենսագրությունը երիտասարդ մասնագետ Արմեն Ջուհարյանը:

Համալսարանում երկու տարի աշխատելուց հետո 1982-ին տեղափոխվեց ատոմային էլեկտրակայանների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի մասնաճյուղ, ուր և աշխատում է մինչև օրս: Համալսարանական խոր և կայուն գիտելիքներով զինված երիտասարդի համար դժվար չէր լուծել այն խնդիրները, որոնք

մասնաճյուղում դրվեցին նրա առաջ: Այստեղ կատարվող աշխատանքները վերաբերում են ատոմակայանների մարզասարքին, որը նպատակաճանձ է ապահովելու ԱԷԿ-ների հուսալի և անվտանգ աշխատանքը:

Արմենին հանձնարարվեց կատարել ԱԷԿ-ների մարզասարքի հիդրավիկ ցանցերի՝ խողովակաշարերի համակարգի ռեժիմների հաշվարկները: Ֆիզիկայի երևույթներին և օրենքներին քաջատեղյակ երիտասարդը, օգտագործելով ծրագրավորման խոր գիտելիքները, ձեռնամուխ եղավ այդ հետաքրքիր, միևնույն ժամանակ դժվարին և ծավալուն աշխատանքին:

— Մարզասարքում ԱԷԿ-ի դեկավարման վահանակը, — ասում է Արմեն Ջուհարյանը, — ի տարբերություն բնականի, միացված է ոչ թե կայանին, այլ էլեկտրոնային հաշվիչ մեքենային, որտեղ

տեղակայված են ԱԷԿ-ներում տեղի ունեցող բոլոր տեխնոլոգիական պրոցեսների մաթեմատիկական մոդելները, որոնք էլ հնարավորություն են տալիս վերարտադրելու ատոմակայանի իրական աշխատանքի ցանկացած ռեժիմ:

Ասե՛ք, որ մարզասարքի համար կազմվող մաթեմատիկական մոդելների թիվն անցնում է 55-ից, որոնց շուրջ 40 տոկոսի աշխատանքը հիմնված է հիդրավիկ ռեժիմների վրա: Ահա հենց այդ 40 տոկոսն էլ բաժին ընկավ Արմենին: Այդ աշխատանքների մի մասի հաջող կատարման արդյունքը եղավ միութենական «էլեկտրական կայաններ» ամսագրում 1985 թվականին տպագրված նրա հոդվածը, որը մեծ հետաքրքրություն առաջ բերեց մասնագետների շրջանում: Ի դեպ, ամսագրի խմբագրությունը բացառության կարգով աշխատանքն ընդունեց և

տպագրեց կրկնակի ծավալով (10-ի փոխարեն՝ 20 էջ):

Հարկ է նշել, որ մինչև օրս նրա ներկայացրած գիտական աշխատանքներին միշտ էլ հետաքրքրությամբ են վերաբերվել մասնագետները: Այսպես օրինակ, դեռևս 1984-ին համամիութենական միջճյուղային դպրոց-գիտաժողովում նրա ներկայացրած աշխատանքը արժանացավ «Լավագույն զեկուցում» մրցանակին, իսկ 1985 թ. երիտասարդ գիտնականների և մասնագետների հանրապետական 4-րդ գիտաժողովում նրան շնորհվեց «Լավագույն տեսական աշխատանքի համար» մրցանակը:

Երիտասարդ մասնագետը ութ գիտական հոդվածների հեղինակ է: Ներկայումս նա աշխատում է մոդելացման դիսանիկ ծրագրերի վերաբերյալ ավտոմատացնել մոդելավորումը: Մեծ աշխատասիրությամբ տոգորված երիտասարդը

նվիրվածությամբ է ձեռնամուխ եղել այդ աշխատանքներին:

Նա ակտիվորեն է մասնակցում նաև մասնաճյուղի հասարակական կյանքին: Արմենը մասնաճյուղի երիտասարդ գիտնականների և մասնագետների խորհրդի նախագահն է, ԼԿԵՄ բյուրոյի անդամ: Ծնորհակալ գործ է կատարում երիտասարդության շրջանում՝ ներանց գիտական ստեղծարար աշխատանքների մեջ ներգրավելու, գիտական կոմիվածություն ձեռք բերելու համար:

Երբ ազատ ժամանակ է ունենում, մեծ սիրով է այն տրամադրում շախմատին: Վերջերս մասնաճյուղում Նոնա Գափրինդաշվիլու տված միաժամանակյա խաղի սեանսում Արմենին հաջողվեց ոչ-ոքի խաղալ անվանի գրոսմայստերի հետ:

Այսօր արդեն նրա տղն դիսերտացիոն աշխատանքի կատարման հարցն է, որին աջալըջորեն է տրամադրված երիտասարդ մասնագետը: Այնպես որ, հեռու չէ նաև «երրորդ ոսկին»՝ դիսերտացիայի պաշտպանությունը: